ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Արդյունաբերության քաղաքականության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, այլ իրավական ակտերով, Նախարարության կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում Նախարարը՝ Նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ:

4. Վարչության կառուցվածքում ընդրգկվում են վարչության պետը և վարչության բաժինները:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) արդյունաբերության մրցունակության բարձրացումը,

2) արտահանման խթանումը և արտաքին տնտեսական կապերի զարգացումը:

6. Վարչության հիմնական նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքային տնտեսական զարգացման անհամաչափությունների նվազեցմանն նպաստելը,

2) Արդյունաբերության զարգացմանը նպաստող ենթակառուցվածքների ձևավորումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչության գործառույթներն են՝

1) մշակում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման քաղաքականությունը (այդ թվում՝ ճյուղային) և իրականացնում այն տնտեսության գերակայություններին համապատասխան,

2) մշակում է արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմները, ուղղությունները և գործողությունները,

3) մշակում է ընկերություններին օրենսդրության շրջանակներում պետական աջակցության քաղաքականությունը,

4) իր իրավասության սահմաններում իրականացնում է տնտեսության ճյուղերի արտադրական գործունեության մոնիտորինգ, վեր է հանում կոնկրետ ձեռնարկություններում առկա խնդիրները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

5) տնտեսության բնագավառում ապահովում և ձևավորում է պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության ոլորտային հարթակներ,

6) ոլորտային և ճյուղային քննարկումների միջոցով վեր է հանում արդյունաբերական զարգացման խոչընդոտները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

7) մշակում և իրականացնում է արդյունաբերական ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, արդյունաբերության տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականությունը՝ ապահովում է տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառումը,

8) առաջարկություններ է ներկայացնում տեղական և ԵԱՏՄ երկրների արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացման և կլաստերների ձևավորման նպատակով,

9) մասնակցում և իրականացնում է արտահանման զարգացման քաղաքականության մշակման գործընթացներին,

10) մասնակցում է արտահանման խթանման իրավական դաշտի մշակմանը, վեր է հանում արտահանման խոչընդոտները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

11) մասնակցում է արտահանման խթանման ծրագրերի մշակման գործընթացներին,

12) մշակում է և իր իրավասությունների սահմաններում ապահովում է օրենսդրությամբ նախատեսված պետական աջակցության և արտոնությունների տրամադրման գործընթացը,

13) մշակում և իրականացում է ազատ տնտեսական գոտիների և արդյունաբերական գոտիների ձևավորման գործունեության իրականացման նպատակով քաղաքականություն,

14) մասնակցում է ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական համագործակցության զարգացմանն ու խորացմանը,

15) մասնակցում է տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակման աշխատանքներին, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում,

16) մասնակցում է ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին,

17) մասնակցում է միկրոտնտեսական քաղաքականության մշակմանը և դրա դիտանցման իրականացմանը,

18) մասնակցում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը՝ երկարաժամկետ տնտեսական աճի մարտահրավերների տեսակետից,

19) մասնակցում է տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության մշակմանը,

20) մասնակցում է գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի մշակմանը,

21) մասնակցում է նորամուծության խթանման քաղաքականության մշակմանը,

22) մասնակցում է արտաքին շուկաների ուսումնասիրմանն ու վերլուծմանը և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,

23) առաջարկություններ է ներկայացնում պետական գործառնություններում մասնավոր հատվածի դերի բարձրացման վերաբերյալ,

24) մասնակցում է գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտմանը և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ, մասնակցում է կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար միջավայրի ձևավորմանը,

25) առաջարկություններ է ներկայացնում տարածքային տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ, նախաձեռնում տարածքային տնտեսական զարգացմանն ուղղված նպատակային ծրագրեր և իրականացնում դրանց դիտանցում,

26) իր իրավասության սահմաններում մասնակցում է հողերի կառավարմանը և համայնքների քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատանքի գնահատմանը,

27) մշակում է երկակի նշանակության ապրանքների և ծագման երկրի սերտիֆիկացման քաղաքականությունը,

28) մասնակցում է արդյունաբերության ճյուղերի միջև էլեկտրոնային հարթակների ձևավորմանը և թվային տիրույթում դրանց գործարկմանը,

29) մասնակցում է կառուցապատման գործընթացի պարզեցման աշխատանքներին,

30) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ նախարարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Վարչությունը կազմված է հետևյալ բաժիններից.

1) Արդյունաբերության զարգացման բաժին,

2) Տնտեսական գոտիների և ենթակառուցվածքների զարգացման բաժին:

9. Վարչության բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Արդյունաբերության զարգացման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) մշակում է Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման քաղաքականությունը և իրականացնում այն տնտեսության գերակայություններին համապատասխան,

2) մշակում է արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության հիմնական մեխանիզմները, ուղղությունները և գործողությունները,

3) մշակում է ընկերություններին օրենսդրության շրջանակներում պետական աջակցության քաղաքականությունը,

4) իր իրավասության սահմաններում իրականացնում է տնտեսության ճյուղերի արտադրական գործունեության մոնիտորինգ, վեր է հանում կոնկրետ արդյունաբերական զարգացման խոչընդոտները, ինչպես նաև ձեռնարկություններում առկա խնդիրները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

5) մշակում և իրականացնում է արդյունաբերական ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, արդյունաբերության տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականությունը՝ ապահովում է տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ուղղությամբ մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառումը,

6) առաջարկություններ է ներկայացնում տեղական և ԵԱՏՄ երկրների արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացման և կլաստերների ձևավորման նպատակով,

7) մշակում և իրականացնում է արտահանման զարգացման քաղաքականությունը և արտահանման խթանման ծրագրերը,

8) մասնակցում է արտահանման խթանման իրավական դաշտի մշակմանը, վեր է հանում արտահանման խոչընդոտները և առաջարկություններ է ներկայացնում դրանց վերացման ուղղությամբ,

9) մասնակցում է ԵԱՏՄ շրջանակներում արդյունաբերական համագործակցության զարգացմանն ու խորացմանը,

10) մասնակցում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը՝ երկարաժամկետ տնտեսական աճի մարտահրավերների տեսակետից,

11) մշակում է իր իրավասությունների սահմաններում և ապահովում է օրենսդրությամբ նախատեսված պետական աջակցության և արտոնությունների տրամադրման գործընթացը,

12) մասնակցում է տեխնիկական կանոնակարգմանն առնչվող իրավական դաշտի մշակման աշխատանքներին, այդ թվում՝ ԵԱՏՄ շրջանակներում,

13) մասնակցում է ԵԱՏՄ սակագնային և ոչ սակագնային կարգավորման աշխատանքներին,

14) մասնակցում է միկրոտնտեսական քաղաքականության մշակմանը և դրա դիտանցման իրականացմանը,

15) մասնակցում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը՝ երկարաժամկետ տնտեսական աճի մարտահրավերների տեսակետից, տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության և գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ծրագրերի մշակմանը,

16) մասնակցում է արտաքին շուկաների ուսումնասիրմանն ու վերլուծմանը և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,

17) մշակում է երկակի նշանակության ապրանքների և ծագման երկրի սերտիֆիկացման քաղաքականությունը,

18) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

11. Տնտեսական գոտիների և ենթակառուցվածքների զարգացման բաժնի հիմնական գործառույթներն են.

1) մշակում և իրականացում է ազատ տնտեսական գոտիների և արդյունաբերական գոտիների ձևավորման գործունեության իրականացման նպատակով քաղաքականություն,

2) առաջարկություններ է ներկայացնում տարածքային տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման վերաբերյալ, նախաձեռնում տարածքային տնտեսական զարգացմանն ուղղված նպատակային ծրագրեր և իրականացնում դրանց դիտանցում,

3) մասնակցում է տարածքային տնտեսական քաղաքականության մշակմանը և իրականացմանը,

4) իր իրավասության սահմաններում մասնակցում է հողերի կառավարմանը և համայնքների քաղաքաշինական փաստաթղթերի մշակմանը, Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատանքի գնահատմանը,

5) մասնակցում է կառուցապատման գործընթացի պարզեցման աշխատանքներին,

6) այլ գործառույթներ՝ Բաժնի պետին վերապահված լիազորությունների շրջանակներում:

VI. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

12. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

13. Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:

14. Վարչության բաժինները ղեկավարում են բաժինների պետերը:

15. Բաժինների պետերն անմիջական ենթակա և հաշվետու են վարչության պետին:

16. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի ներկայացմամբ:

17. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

18. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

19. Վարչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: